ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՓԼՈՎԴԻՎԻ ՄԵՋ

Սույն թվականի մայիսի 21-ին Փլովդիվի Ս. Գևորգ եկեղեցվո մեջ քահանայական ձեռնադրություն տեղի ունեցավ Ռումանահայ և Պուլկարահայ զույգ թեմերու բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի ձեռամբ:

Թեկնածուն էր Սոֆիայի Ս. Աստվածածին եկեղեցվո մեջ ծառայող երկարամյա ավագ սարկավագ Կարապետ (Կարո) Պարույրի Խաչերյանը:

Խարտավիլակության պաշտոնը կատարեց Ս. Գևորգ եկեղեցվո երկարամյա ավագ սարկավագ և դպրապետ Սարգիս Պալթայանը՝ քահանայի չգոյության պատճառով, որը վկայեց թեկնածու Կարապետ ավագ սարկավագի հոգևոր և բարոյական արժանիքները:

Մայիսի 20-ին, շաբաթ երեկո, տեղի ունեցավ «Քահանայական կոչում»:

Հաջորդ օր, կիրակի, հանդիսավոր պատարագ մատուցեց Սրբազան հայրը, բազմահարյուր հավատացյալներու ներկայության, որտեղ ներկա էին Պուլկար Ուղղափառ Եկեղեցվո ներկայացուցիչ՝ արժանապատիվ Տ. Թոմա քահանա Պոյքովը, պուլկար Կաթոլիկ համայնքի ներկայացուցիչ՝ Գերաշնորհ եպիսկոպոս Կեորկի Յովչևը, Ունիաթ Եկեղեցվո՝ արժանապատիվ Հրապրը քահանա Մարքովը, Պուլկարահայ թեմական խորհրդի ներկայացուցիչ՝ ատենապետ Կարո Տեր-Մեսրոպյանը, Սոֆիայի և Պուրկազի եկեղեցական վարչությանց ներկայացուցիչները, «Երևան» մշակութային կազմակերպության Փլովդիվի մասնաճյուղի ներկայացուցիչը, տեղվույն Եկեղեցական վարչության լրիվ կազմը, թեկնածուին մերձավորները, ինչպես նաև մոտակա քաղաքներեն հայ համայնքներու ներկայացուցիչներ, հյուրեր, ազգայիններ:

Քահանայական սույն ձեռնադրությունը կզուգադիպեր Սրբոցն Հռիփսիմյանց կուսանաց նահատակության, ինչպես նաև պատմական Սարդարապատի հերոսամարտի տարեդարձին, որը ավելի արժեք և նշանակություն կուտար հանդիսության:

Եկեղեցական արարողությունը սկսավ «Ուրախ լեր Սուրբ Եկեղեցի» շարականով, որուն հաջորդեց ս. պատարագի հոգեզմայլ երգեցողությունը՝ «Շնորհալի» երկսեռ քառաձայն երգչախմբին մասնակցությամբ, (Խմբավար՝ Սարգիս Պալթայան):

Մի պահ ձեռնադրության արարողությունից

Իսկապես ուրախ է մեր Եկեղեցին: Ուրախ էին նաև ներկաները, որոնք ավելի քան 7 ամիսե ի վեր ակամա զրկված էին հոգևոր հովիվե՝ այժմու արժանապատիվ Տ. Գրիգոր Խաչաքահանա Եզեկելյանի ծանր վիրահատման հետևանքով:

Այս պակասը մասամբ կվերացվեր թեմիս առաջնորդ Սրբազանին հաճախակի հովվական այցելություններով, նամանավանդ տոնական օրերուն, երբ կուգար Պուքրեշեն, խոնարհաբար կպատարագեր, կքարոզեր ու կմխիթարեր հավատացյալներ:

Ս. պատարագի սկզբին նորընծան զույգ սարկավագներու ընկերակցությամբ ավագ խորան առաջնորդվեցավ ու հավատացյալներու բազմության դառնալով իր ձեռքերը բարձրացուց ի նշան աշխարհիկ կյանքեն հրաժարման, որմե հետո՝ հանդիսավոր արարողության հմայքը հասավ հոգևոր վերացման, երբ սկսավ օծման խորհրդավոր արարողությունը: Գերաշնորհ Սրբազան հայրը սրբալույս մեռոնով օծեց նորընծայի ճակատն ու ձեռքերը, զայն վերանվանելով Տեր Գևորգ քահանա, որպես մեր Ս. Եկեղեցվո նվիրյալը:

Նորընծան դառնալով ժողովուրդին՝ իր առաջին օրհնությունը տվավ ըսելով՝ «Խաղաղութիւն ամենեցուն»:

Ապա պատարագիչ Սրբազանը ներշնչված, իմաստալից քարոզով մը շնորհավորելով զայն, շատ կարևոր և թանկագին պատվերներ տվավ: Ավելի վերջ, բոլոր հավատացյալները շնորհավորեցին նորընծան՝ համբուրելով անոր ձեռքը:

* * *

Նորընծա Գևորգ քահանան ծնած է Սոֆիա 1940 թվին հավատացյալ բարեպաշտ ու հայրենասեր համեստ ընտանիքի մեջ:

Նախնական ուսումը ստացած և ավարտած է Սոֆիայի Սուրեն Սպանդարյանի անվան հայկական դպրոցը, իսկ միջնակարգը՝ տեղվույն Նուրբ մեքենաշինական տեխնիկումը: Ծառայած է Պուլկար բանակին մեջ, որմե հետո աշխատած որպես մեխանիկ և ապրանքագետ իր ապրուստը հոգալու համար: Ամուսնացած և երջանիկ բույն կազմած՝ բախտավորվելով երկու սիրասուն զավակներով:

Փոքր տարիքեն սեր և հակում ցուցաբերած է դեպի Հայ Եկեղեցին և հայ հոգևոր երաժշտությունը: Երկար տարիներ ծառայած ու պաշտոնավարած է որպես դպիր, սարկավագ, ապա ավագ սարկավագ:

* * *

Շաբաթ մը վերջ, կիրակի մայիսի 28-ին (Տոն Կաթողիկե Ս. Էջմիածնի և Հայաս-

տանի Հանրապետության տարեդարձը) Տ. Գևորգ քահանան իր անդրանիկ պատարագը մատուցեց Սրբազան առաջնորդի նախագահությամբ:

Պատարագի ավարտին՝ վերապահված էր հաճելի անակնկալ մը,— այն է, Միջնորդությամբ թեմիս Գերաշնորհ Սրբազան առաջնորդին, Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարեհաճ կարգադրությամբ պիտի պարգևատրվեր, 3-րդ անգամ ըլլալով, պուլկարահայ հայտնի երաժշտագետ, խմբավար, երգահան Սարգիս Պալթայան երաժշտական, եկեղեցական, ստեղծագործական աշխատանքներու 70-ամյակին (1919—1989) և ծննդյան 92-րդ տարեդարձին առթիվ:

Սրբատառ կոնդակը ավագ խորանեն կարդաց պատարագիչ տեր հայրը, ապա Սրբազանի ձեռամբ հանձնվեցավ հոբելյարին:

Սրբազան առաջնորդը գնահատելով Սարգիս Պալթայանի կատարած բազմակողմանի գնահատելի աշխատանքները, նվիրումն ու աշխատելու բուռն եռանդը՝ հակառակ առաջացած տարիքին՝ արտագինն ողջունելով զայն, քաջառողջություն, ուժ, կարողություն և երկար կյանք մաղթեց՝ շարունակելու իր նվիրական աստվածավայել գործը և արտասանեց իր լավագույն քարոզներեն մին՝ խանդավառելով հավատացյալները:

Անիկա պուլկարահայության երախտագիտությունն ու համակրանքը հայտնեց պուլկար կառավարության և ազնիվ պուլկար եղբայրացած ժողովուրդին՝ մեզ հանդեպ ցուցաբերված հոգատարության համար, երբ թրքական յաթաղանեն հալածված հայ բեկորները ապաստան, հանգիստ և ազատություն գտան այս հյուրընկալ և գեղեցիկ երկրին մեջ, որտեղ կվայելեն երջանիկ և բարեկեցիկ կյանք մը:

Ակներև հուզված, հոբելյարը Սրբազանին և անոր միջոցավ Նորին Սուրբ Օծություն Վեհափառ հայրապետին իր երախտագիտությունն ու շնորհակալությունը հայտնեց իրեն շնորհված բարձր պարգևին համար: Անիկա իր երախտագիտությունն ու գոհունակությունը հայտնեց պուլկար պատկան մարմիններուն, թեմական խորհուրդին, Փլովտիվի Եկեղեցական վարչության, «Շնորհալի» երկսեռ երգչախմբին անդամներուն, դպրաց դասու իր սրտագին ընկերներուն, որոնք թև-թիկունք կանգնած են իրեն:

ՄԱՐՏԻԿ ԱՐԱՄԻ ՀԱԳԻԳՅԱՆ